«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 9
26.03.2024թ.

1. Դոցենտի գիտական կոչում շնորհելու մրցույթի վերաբերյալ

Հաստատել գիտական խոհրդի նիստի ընթացքում կազմակերպված փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները: Հիմք ընդունելով ՀՀ ԲԿԳԿ «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու» կարգի 5-ի 2 կետի պահանջները և հաշվի առնելով ՀԱԱՀ գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները

1.1. Տիգրան Աղվանի Հովհաննիսյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Զ.01.00 - «Ագրոնոմիա» մասնագիտությամբ:

1.2. Վահան Գագիկի Հովհաննիսյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում ԺԶ.00.00 - «Անասնաբուժություն» մասնագիտությամբ:

1.3. Աննա Հակոբի Պարսյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ը.00.00 - «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

1.4. Աստղիկ Վիգենի Ղազարյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ը.00.00 - «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

1.5. Դավիթ Ալեքսանի Հովհաննիսյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ը.00.00 - «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

1.6. Լուսինե Վանուշի Շահինյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ե.18.00 - «Պարենամթերքների տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

1.7. Տիգրան Լյուդվիգի Խաչատրյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ե.18.00 - «Պարենամթերքների տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

1.8. Ռաշիդ Ջասմի Մախմուդյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ը.00.00 - «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

1.9. Ամալյա Մկրտչի Գալստյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ը.00.00 - «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

1.10. Նաիրա Վարդանի Յավրույանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ե.18.00 - «Պարենամթերքների տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

1.11. Արփենիկ Կոլյայի Կռոյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ա.01.00 - «Մաթեմատիկա» մասնագիտությամբ:

2. ՀԱԱՀ 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակառուների հաստատման հարցի վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակառուներին՝ ըստ ֆակուլտետների.

➢ Ագրոնոմիական ֆակուլտետ, ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի անվան կրթաթոշակ.

- ՕԳ 1-ին կուրսի մագիստրանտ Աննա Սամվելի Համբարձումյան,
- ԿԳ 1-ին կուրսի մագիստրանտ Լիլիթ Պավելի Օհանյան,

➢ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ, տնտեսագետ Վահան Տոտոմյանցի (Թոթոմյանց) անվան կրթաթոշակ.

- ԱԲՖ 3-րդ կուրսի ուսանող Էլեն Վաչիկի Ոսկանյան,
- ԱԷԿ 4-րդ կուրսի ուսանող Լուսինե Համլետի Գևորգյան,

➢ Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ, ակադեմիկոս Սերգեյ Մովսեսյանի անվան կրթաթոշակ.

- ԲԺ 1-ին կուրսի մագիստրանտ Ռաիսա Ռոզ Ավետիսի Չաքմաքեան,
- ԲԺ 3-րդ կուրսի ուսանող Անդրանիկ Միհրի Ռույան,

➢ Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ, կոնյակագործ Մարգար Սեդրակյանի անվան կրթաթոշակ.

- ԳՏ 1-ին կուրսի մագիստրանտ Մարիամ Գրիգորի Միրանյան,
- ՊՏ 1-ին կուրսի մագիստրանտ Իզաբելա Սոսի Խաչատրյան,

➢ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ, գյուտարար Ասատուր Սարաֆյանի (Օսկար Բենկեր) անվան կրթաթոշակ.

- ՃԳ 1-ին կուրսի մագիստրանտ Գագիկ Արսենի Գրիգորյան,
- ՃԳ 1-ին կուրսի մագիստրանտ Ռաֆայել Աղասու Եփրեմյան:

3. «ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման և վճարման» կարգում լրացում կատարելու վերաբերյալ

2023թ հունվարի 30-ին ՀԱԱՀ գիտական խորհրդում հաստատված «ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման և վճարման» կարգի «Գիտական գործունեության սույն կարգով սահմանված տեսակների կատարման համար նախատեսված լրավճարների համակարգը» բաժնի աղյուսակի 2-րդ կետում ավելացնել ևս մեկ ենթակետ՝ հետևյալ ձևակերպումով. «Q մակարդակ չունեցող Սկոպուս (Scopus) և Վեբ օֆ Սայնս (Web of science) միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում տպագրված հոդվածներ», իսկ լրավճարի չափը սահմանել 50 հազար դրամ:

4. Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրի նպատակային-ծրագրային ֆինանսավորման հայտերի մրցույթին ներկայացվող գիտական թեմաները երաշխավորելու և ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու հարցի վերաբերյալ

4.1. ՀԱԱՀ «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի կողմից Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրի նպատակային-

ծրագրային ֆինանսավորման հայտերի մրցույթին ներկայացվող «Մի շարք արժեքավոր մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենոտիպավորում (անձնագրավորում), գենոֆոնդի պահպանություն և սթրեսակայուն սորտանմուշների ստացում» թեման երաշխավորել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու և ֆինանսավորում ստանալու համար (գիտական ղեկավար՝ գ.գ.դ., պրոֆեսոր Անդրեաս Մելիքյան):

4.2.ՀԱԱՀ «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի կողմից Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրի նպատակային-ծրագրային ֆինանսավորման հայտերի մրցույթին ներկայացվող «Արարատյան դաշտի աղուտ և ալկալի հողերի ֆիտոմելիորացիան Մատուտակի (Glycyrrhiza glabra) կիրառմամբ և վերջինիս արմատների համալիր, անթափոն վերամշակման տեխնոլոգիայի մշակում» թեման երաշխավորել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու և ֆինանսավորում ստանալու համար (գիտական ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Արամ Միքայելյան):

4.3.ՀԱԱՀ «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի կողմից Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրի նպատակային-ծրագրային ֆինանսավորման հայտերի մրցույթին ներկայացվող «Կարկտահարված մշակաբույսերի վերականգնողական (ռեգեներացիա) ցուցանիշների բարձրացում նոր բաղադրության համալիր պարարտանյութի կիրառմամբ» թեման երաշխավորել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու և ֆինանսավորում ստանալու համար (գիտական ղեկավար՝ գ.գ.թ., դոցենտ Գայանե Գասպարյան):

4.4.ՀԱԱՀ «Ջրային և հողային ռեսուրսների կառավարման» ամբիոնի կողմից Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրի նպատակային-ծրագրային ֆինանսավորման հայտերի մրցույթին ներկայացվող «Գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործման և կայուն գյուղատնտեսության զարգացման միջոցառումների մշակում թվային տեխնոլոգիաների կիրառմամբ» թեման երաշխավորել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու և ֆինանսավորում ստանալու համար (գիտական ղեկավար՝ գ.գ.դ., պրոֆեսոր Գուրգեն Եղիազարյան):

5. Լուսինե Համազասպի Ծպնեցյանի թեկնածուական ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցի վերաբերյալ

ՀԱԱՀ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի հայցորդ Լուսինե Համազասպի Ծպնեցյանի՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան հայցող «ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները» անվանումով ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

6. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի հավանությանն արժանացած դասագիրքն ու ուսումնական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու հարցի վերաբերյալ

6.1. Ագրոոմիական ֆակուլտետի կողմից հրատարակման ներկայացված «Ագրոլանդշաֆտագիտություն» վերնագրով դասագիրքը (հեղինակ՝ Ս.Ջ. Թամոյան) երաշխավորել հրատարակման (որոշումն ընդունվեց միաձայն):

6.2. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի կողմից հրատարակման ներկայացված «Կենդանիների տրեմատոդներն ու տրեմատոդոզները» մաս-1 վերնագրով ուսումնական ձեռնարկը (հեղինակներ՝ Վ.Վ. Գրիգորյան, Լ.Հ. Գրիգորյան) երաշխավորել հրատարակման:

7. «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանում փոփոխություն կատարելու հացի վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ-ի և Գերմանիայի Դաշնային հանրապետության Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի (ՎԿԳՀ) միջև համագործակցության շրջանակում իրականացվող «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանում առաջարկվող փոփոխությունները՝ այն համապատասխանեցնելով ՎԿԳՀ-ի ուսումնական պլանին:

8. Բակալավրի աստիճանի մասնագիտական կրթական ծրագրերը հաստատելու, միջին մասնագիտական ծրագրերը (դուալ ուսուցմամբ) 2023թ-ին հաստատված ուսումնական պլանների ժամանակացույցով կազմակերպելու հարցի վերաբերյալ

8.1. Հաստատել ՀԱԱՀ Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի 072101.00.6 Պարենամթերքի տեխնոլոգիա մասնագիտության տեխնոլոգիայի բակալավրի 072101.02.6 «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» և 072101.03.6 «Սննդամթերքի անվտանգություն» մասնագիտական կրթական ծրագրերը:

8.2. ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի՝ 2022թ-ին հաստատված «Ջերմատնային տնտեսություն» և «Պահածոների և սննդախտանյութերի տեխնոլոգիա» միջին մասնագիտական ծրագրերը (դուալ ուսուցմամբ) կազմակերպել 2023թ-ին հաստատված ուսումնական պլանների ժամանակացույցով:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՋԱՔՈՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ